

Croisades. Occident, Հոր. Ա. էջ 384): Պատմիչին այս խօսքին հիմնարկել բացատրութիւնը պէտք է հասկնալ ոչ միայն նորոգել, այլ ամբողջութեամբ վերաշինել: Անկլո-Սաքսոն Scewulf՝ որ 1102 ին Յոպպէ հասած է, յտակօրէն կը գրէ թէ «Նազարէթ քաղաքը Սարակինոսներու կողմէն ամբողջութեամբ քանդուած է, սակայն խիստ գեղեցիկ վանք մը ցոյց կու տայ աւետման տեղը» (Recueil des voyages et des mémoires publiés par la Société de Géographie. 1839. Հոր. Դ. էջ 550): Ռուսազգի Դանիէլ վանական 1106-1107 ին կը գրէ (Գլ. 89) իր այցելութիւնը հետեւեալ կերպով. «Նազարէթ փոքր աւան մ'է լեռներէ շրջապատուած. երեք սեղաններով բարձր և մեծ եկեղեցի մը կը բարձրանայ աւանին մէջ. հոն մտնելով՝ ձախին կը տեսնուի փոքր սեղանի մը առջեւ խորունկ այր մը, որ ունի երկու նեղ դռներ. մի՛ն արեւելք եւ միւսն՝ արեւմուտք, որ կը տանին այրը. արեւմտեան դռնէն մտնողը աջին կը տեսնէ խուց մը որուն մուտքը փոքր է և հոն կ'ապրէր Ս. Կոյսը Յիսուսի հետ: Նոյն նուիրական խուցը կը պարունակէ այն մահիճը՝ որուն վրայ Յիսուս կը հանգչէր. խուցը գրեթէ հողին հաւասար էր»: «Նոյն այրին մէջ, արեւմտեան դռնէն մտած ժամանակ, ձախէն կը տեսնուի զերեզմանը Ս. Յովսէփի: Ս. Կոյսին խօսեցեալը հոն թաղուած է նոյն իսկ Յիսուս Քրիստոսի ձեռքով» (Գլ. 90): Յիշեալը 91, 92 և 93 գլուխներու մէջ կու տայ ուրիշ երկրորդական ծանօթութիւններ: Յար և նման ծանօթութիւններ կու տան 1172 ին Թէոտորիք, 1177 ին յոյն Յովնաննէս Փոկաս: 1187 ին Երուսաղէմ Սալահէտտինի ձեռքով գրաւուեցաւ և Խաչակիրները վտարուեցան Պաղեստինէն. բայց ծովեզերեայ քանի մը տեղեր պահպանեցին, մասնաւորապէս Աքքեան՝ որ մինչև 1291 քրիստոնէութեան մեծ ամբողջութիւնը եղաւ: Անոնք քանիցս յաջողեցան Դալիլիոյ զանազան կողմերը այցելել, և 1229 ին փետր. 20 ի դաշնագրութիւնը իրենց ապահովեց Նազարէթի ճանապարհը: Նոյն թուականէն քիչ վերջ 1252 ին Ս. Լուգովիկոս այցելեց Նազարէթ և Թաբոր լեռը: 1263 ին Եգիպտոսի Սուլթան Պիպարս Պինտըքտար յարձակելէ յետոյ Աքքեայի վայ, Պէյսան եկաւ և անկէ արչաւախումը մը զրկեց Նազարէթ և Թաբոր լեռը, եկեղեցիները և վանքերը քանդելու համար: Պիպարս ո՛նէ քրիստոնէական շէնք կանգուն չձգեց և ամէնքն ալ հողի հաւասար ըրաւ: Նազարէթի սրբավայրերը դաւ-